ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք.Եղեգիս, (0281) 99282, shatin.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15-Ը ՀՈՒՆԻՍԻ 2021 թվականի N 156 Ա

ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՑՈՒՑԱԿՆԵՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 77-րդ հոդվածի 3-րդ մասով

որոշում եմ՝

Ստորև ներկայացված գույքը ներկայացնել ավագանու հաստատմանը և գույքագրել Եղեգիսի համայնքապետարանի գույքային հաշվեկշռում՝

հ/հ	Ապրանքի անվանումը	քանակ, հատ	Սերիա	Միավորի գինը, ՀՀ դրամ /ներառյալ բոլոր հարկերը և տրանսպորտային ծախսերը/	գին, ՀՀ դրամ
1	Կախովի խոտհնձիչ մատնասեգմենտային ԿՍՓ-2,1 Ֆ-4	2	71 72	300 000	600 000
2	Անիվավոր տրակտոր Բ, 2-րդ քարշակ դասի, հրիչով JM 1304	1	AGNH1300411C	15 150 000	15 150 000
3	Էքսկավատոր Elaz-BL880 /VINELAZBL880A20P0498/	1	2580 LL	32 175 000	32 175 000
4	հիդրոմուրճ FD-5X	1		2 425 000	2 425 000
5	անիվավոր տրակտոր 1,4 քարշակ դասի՝ կոմունալի հրիչով, XSB804	2	82007006 82007007	9 300 000	18600000
6	Թրթուրավոր տրակտոր 3-րդ քարշակ դասի, թեքվող բուլդոզերային հրիչով ВОЛТРА 90 ТГ1-А1Х	1	0013	17 810 000	17 810 000

	Ընդամենը՝				86760000 /ութսունվեց միլիոն յոթ հարյուր վաթսուն հազար/

	Անվանում	Չափի միավոր	քանակ	գին	ընդամենը
1	3D տպիչի լցանյութ	հատ	5	15000	75000
2	3D տպիչի դետալներ	հատ	4	5000	20000
3	4մմ հաստության ֆաներա	հատ	5	6000	30000
4	4մմ օրգանական ապակի	հատ	5	7000	35000
5	CNChաստոցի սվեռլոներ և ֆրեզներ	հատ	5	2000	10000
6	Թվային մուլտիմետր	հատ	1	6000	6000
7	Զոդիչ կայան	հատ	1	35000	35000
8	Զոդիչ	հատ	1	5000	5000
9	Arduino uno3	հատ	2	6000	12000
10	Arduino uno3 kid	հատ	1	12000	12000
11	Տվիչներ	հատ	5	2000	10000
12	Անկյունային պահարան	հատ	1	82000	82000
	ընդամենը				332000 /երեք հարյուր երեսուներկու հազար/

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ

2021 թ. հունիսի 15
հ.Եղեգիս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք.Եղեգիս, (0281) 99282, shatin.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15-Ը ՀՈՒՆԻՍԻ 2021 թվականի N 157 Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՏԱԲՈՒՅՆՔ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԲՆԱԿԻՉ ՄԱՄԱՇ ԿԻՐԱԿՈՍԻ ՄԱՐԳԱՐՅԱՆԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքի Արտաբույնք բնակավայրի բնակչուհի Մամաշ Կիրակոսի Մարգարյանը 2021թ. մայիս ամսվա սկզբներից Արտաբույնք բնակավայրում սեփականության իրավունքով իրեն պատկանող հողատարածքից դուրս, /հողամասի կադաստրային ծածկագիրը՝10-010-0042-0002 / սեփական բնակելի տան պատի երկայնքով մոտ 16 մետր երկարությամբ, համայնքային սեփականություն հանդիսացող ընդհանուր օգտագործման հողատարածքի / ներբնակավայրային ավտոճանապարհ / վրա առանց համապատասխան թույլտվության ինքնակամ իրականացրել է բետոնյա շինարարություն, ինչով խախտվել են Հայաստանի հանրապետության կառավարության <<Հայաստանի հանրապետությունում կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթեր տրամադրման կարգը հաստատելու և Հայաստանի հանրապետության Կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին>> 15-ը մարտի 2015 թվականի N 596-Ն որոշման պահանջները:

11.06.2021թ. իրականացվել է վարչական վարույթի մասնակիցների լսում, որի ժամանակ վարչական իրավախախտում կատարած Մ. Մարգարյանը հայտարարել է, որ ինքը գործել է օրենքի սահմաններում, համաձայն չի իր նկատմամբ վարչական տույժ կիրառելուն:

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, 42-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի, <<Վարչական իրավախախտումների վերաբերյալ>> Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասի, 2191 –րդ, 305-րդ հոդվածների պահանջներով՝

որոշում եմ՝

1.Հայաստանի Հանրապետության Կառավարության <<Հայաստանի Հանրապետությունում կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին >> 15-ը մարտի 2015 թվականի N 596-Ն որոշման պահանջները խախտելու համար Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքի Արտաբույնք բնակավայրի բնակչուհի Մամաշ Կիրակոսի Մարգարյանին ենթարկել

վարչական պատասխանատվության՝ նշանակելով տուգանք՝ սահմանված նվազագույն աշխատավարձի չորսհարյուրապատիկի չափով:

2. Առաջարկել Մամաշ Մարգարյանին տուգանքը անձնական միջոցներից ոչ ուշ, քան տասնհինգ օրվա նթացքում մուծել Եղեգիս համայնքի բյուջեի 900 355 113 060 հաշվեհամարին կամ վճարումը կատարել Եղեգիսի համայնքապետարանում՝ ֆինանսական բաժին:

3. Տուգանքը նշված ժամկետում չվճարելու դեպքում՝ այն գանձել օրենքով սահմանված կարգով:

4.Որոշումն ուժի մեջ է մտնում պատճենը Մամաշ Մարգարյանին հանձնելու հաջորդ օրվանից և կարող է գանգատարկվել դատական կարգով՝ երկու ամսվա ընթացքում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ

2021 թ. հունիսի 15
հ.Եղեգիս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք.Եղեգիս, (0281) 99282, shatin.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22-Ը ՀՈՒՆԻՍԻ 2021 թվականի N 158 Ա

03-Ը ՀՈՒՆԻՍԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 153Ա ԵՎ 03-Ը ՀՈՒՆԻՍԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 152Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 3-րդ մասի պահանջներով

որոշում եմ՝

1.Եղեգիս համայնքի ղեկավարի 03-ը հունիսի 2021 թվականի <<Եղեգիս համայնքի վարչական սահմաններում գտնվող հողատեսքերը առանձին միավոր գրանցելու մասին>> թիվ 153Ա որոշման բովանդակության մեջ՝ <<համայնքային սեփականություն>> բառերը փոխարինել <<պետական սեփականություն>> բառերով:

2.Եղեգիս համայնքի ղեկավարի 03-ը հունիսի 2021 թվականի <<Եղեգիս համայնքի վարչական սահմաններում գտնվող հողատեսքերը առանձին միավոր գրանցելու մասին>> թիվ 152Ա որոշման բովանդակությունը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ. <<Եղեգիս համայնքի Թառաթումբ բնակավայրի վարչական սահմաններում գտնվող հետևյալ գյուղատնտեսական նշանակության հողերը գրանցել որպես առանձին միավոր պետական սեփականություն՝

- այլ հողատեսք, կադաստրային ծածկագիր՝ 10-024-0172- , մակերեսը՝ 0,02755 հա,
- այլ հողատեսք, կադաստրային ծածկագիր՝ 10-024-0172- , մակերեսը՝ 0,01638 հա:>>:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ

2021 թ. հունիսի 22
ք.Եղեգիս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք.Եղեգիս, (0281) 99282, shatin.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22-Ը ՀՈՒՆԻՍԻ 2021 թվականի N 159 Ա

ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆԵՐԻՑ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՎԱՃԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով 18-ը հունիսի 2021թ. արձանագրությունները հողամասի՝ աճուրդով վաճառքի արդյունքների մասին, Եղեգիս համայնքի ավագանու 20/04/2021թ. թիվ 32Ա, 20/04/2021թ. թիվ 33Ա որոշումները, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով և Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 70-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով, ***որոշում եմ՝***

1.Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքի Եղեգիս բնակավայրի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող հետևյալ հողատեսքը վաճառել Եղեգիս համայնքի Եղեգիս բնակավայրի բնակիչ Էդիկ Թևոսի Սաֆպարյանին՝

- Գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսք գործառնական նշանակության, ծածկագիր՝ 10-021-0105-0030, մակերեսը 1.024հա՝ 108 864 /մեկ հարյուր ութ հազար ութ հարյուր վաթսունչորս/ ՀՀ դրամ:

2.Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքի Շատին բնակավայրի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող հետևյալ հողատեսքերը վաճառել Եղեգիս համայնքի Շատին բնակավայրի բնակիչ Արզուման Անուշավանի Մարտիրոսյանին՝

- Գյուղատնտեսական նշանակության, այլ հողատեսք գործառնական նշանակության, ծածկագիր՝ 10-035-0231-0071, մակերեսը 0.10729 հա՝ 11408 /տասնմեկ հազար չորս հարյուր ութ/ ՀՀ դրամ,
- Գյուղատնտեսական նշանակության, վարելահող հողատեսք գործառնական նշանակության, ծածկագիր՝ 10-035-0228-0150, մակերեսը 0.11326 հա՝ 58421 /հիսունութ հազար չորս հարյուր քսանմեկ/ ՀՀ դրամ,

ընդամենը՝ 69 829 /վաթսունինը հազար ութ հարյուր քսանինը/ ՀՀ դրամ:

3.Հողամասերը օտարելու համար օրենքով սահմանված ժամկետում և կարգով կնքել առուվաճառքի պայմանագրեր:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ

2021 թ. հունիսի 22
հ.Եղեգիս